ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հոկտեմբերի 2024 թվականի № 422-Ա

ՌՈՒԶԱՆՆԱ ԱՎԱԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի՝ 2023 թվականի դեկտեմբերի 29-ի № 472-Ա որոշումը և *Ռուզաննա Ավալյանի*՝ 2024 թվականի հոկտեմբերի 22-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Ռուզաննա Ավալյանին*** տրամադրել 2024 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործված մասը տասն աշխատանքային օր՝ 2024 թվականի նոյեմբերի 4-ից 15-ը ներառյալ:

2. ***Ռուզաննա Ավալյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության հաշվապահ ***Արմենուհի Հովհաննիսյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ ***Արմենուհի Հովհաննիսյանին*** և «Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Նունե Խաչատրյանին*** ապահովել «Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Նունե Խաչատրյան)* կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2024 թվականի հոկտեմբերի 29
ք. Հրազդան